# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 10 » « հոկտեմբերի » 2018թ.**
**ժամը 10:00**

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | Ռ.Չոբանյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Մ.Այդինյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Է.Միերյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Հ.Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Ա.Փաշայան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | Լ.Ձոհրաբյան |

## 1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Չոբանյան)

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստը կայացել է 2018 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 10:00-ին, ք.Երևան, Կառավարության 3 շենք, 5-րդ հարկ, բնապահպանության նախարարություն, 514 սենյակ հասցեում:

## 2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը շտկելու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. Ա/Ձ «Արման Ասմանգուլյան»-ի կողմից գնահատող հանձնաժողովին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված գրավոր տեղեկատվություն կամ կոմիտեի կողմից տրված նոր տեղկկատվություն չի ներկայացվել:

2.2. «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային ձևով՝ gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային հասցեին ստացվել է գրություն (կցվում է): Գնահատող հանձնաժողովը քննարկել է գրությամբ ներկայացված հիմնավորումները և պարզաբանումները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետը՝ հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտով, որպես 1-ին տեղ զբաղեցրած, յուրաքանչյուր չափաբաժնի մասով հաշվարկած ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ: Ընդ որում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը, ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (26.09.2018թ.) կազմել է 1000 ՀՀ դրամ: Այսպիսով, հայտով ներկայացված 2-րդ չափաբաժնով ժամկետանց հարկային պարտավորությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված չափը գերազանցել է 925 ՀՀ դրամով, 4-րդ չափաբաժնով՝ 800 ՀՀ դրամով և 10-րդ չափաբաժնով՝ 450 ՀՀ դրամով: «Առէա պապիրուս» ՍՊԸ-ն ներկայացրել է ժամկետանց հարկային պարտավորության մարման և հարկային մարմնում դեբետային մնացորդների վերաբերյալ հիմնավորումներ, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պարտքի վճարման կամ հաշվանցման վերաբերյալ դրույթներ նախատեսված չեն:

## 3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Չոբանյան)

3.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Ա/Ձ «Արման Ասմանգուլյան»-ի հայտը:

3.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»՝

3.2.1. կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետը մերժել «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանության շտկման վերաբերյալ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին ներկայացված դիմում-պարզաբանումը:

3.2.2. կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Առէա պապիրուս» ՍՊԸ-ի հայտը:

3.3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացվնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ չափաբաժին 2-ով «Սմարթլայն» ՍՊԸ-ին, չափաբաժին 4-ով «Բիգ Թրեյդ» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 10-ով և 16-ով Ա/Ձ «Արման Մարտիրոսյան»-ին:

3.4. Հանձնաժողովի քարտուղարին՝

3.4.1. Ծանուցել «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ չափաբաժին 2-ով, «Բիգ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ չափաբաժին 4-ով և Ա/Ձ «Արման Մարտիրոսյան»-ին չափաբաժիններ 10-ով և 16-ով հրավերով սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 17-ը ներառյալ, էլեկտրոնային ձևով՝ gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային հասցեին, ներկայացնել Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հավելված №6-ով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն Հավելված №6.1-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Ռ.Չոբանյան)

4.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2018 թվականի հոկտեմբերի 18-ին, ժամը 10:00-ին՝ բնապահպանության նախարարության շենքում, հասցեն՝ ք.Երևան, Կառավարության 3 շ., 5-րդ հարկ, 514 սենյակ:

## 5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

| | | |
|---|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | ________ | Ռ. Չոբանյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | ________ | Մ.Այդինյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | ________ | Է.Միերյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ________ | Հ.Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ________ | Ա.Փաշայան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | ________ | Լ. Ձոհրաբյան |

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով հայտարարված
գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ տնօրեն՝Ա. Զանյանից
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մաշտոցի պող. 16Ա/4
Հեռ. 09142 10 44

Հանձնաժողովի հարգելի անդամներ,

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն մասնակցում է «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգին:

08.10.2018թ. ժամը 12.28 ստացել ենք ՀՀ բնապահպանության նախարարությունից ծանուցում՝ 08.10.2018թ կայացած հանձնաժողովի նիստի N 7 Արձանագրությունը և 05.10.2018թ. ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից Տեղեկատվություն պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն՝«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 26.09.2018թ. ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, ինչը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով նախատեսված սահմանաչափը, ներկայացված գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը և նշված է նաև որ մեզ տրվում է «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 47-րդ կետի պահանջներին համապատասխան մեզ տրվում է մեկ աշխատանքային օր տվյալ անհամապատասխանությունը շտկելու համար, կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, կամ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրված նոր տեղեկատվությամբ:

Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 26.09.2018թ. ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության աշխատակից Հ.Նաջարյանի կողմից ներկայացված տեղեկատվության «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ը ունեցել է ժամկետանց պարտավորություն **1 000 ՀՀ դրամ:**

26.09.2018թ. «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն կողմից ներկայացված հայտի հավելված 5-ով ներկայացրել է գնային առաջարկ ընդամենը առանց ԱԱՀ 459 166, 66ՀՀ դրամի, որի **1%-ը կազմում 4 591, 67 ՀՀ դրամ**:

Ելնելով վերոգրյալից «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ չի գերազանցել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով նախատեսված սահմանաչափը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրվել է նաև տեղեկանք /09.10.2018թ. թիվ 4663/ առ 26.09.2018թ. դրությամբ առկա հարկային պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը ունի դրոշմանիշային վճարի ընդհանուր 1000 ՀՀ դրամի հարկային ժամկետանց պարտավորություն, Ընկերությունը ունի նաև ավելացված արժեքի հարկի գծով 3 222 583 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ, միասնական հաշվում առկա 4 530 737 ՀՀ դրամ գումար:

Մեր Ընկերության կողմից 08.10.2018 ամբողջությամբ մարվել է վերոնշյալ հարկային պարտավորությունը՝ Վճարման հանձնարարական № 691առ 08.10.2018թ,

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տեղեկանքը պարտավորության մարման մասին առ 09.10.2018թ. կարող ենք ներկայացնել 10.10.2018թ.:

Ներկայացնում ենք «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն կողմից հայտ ներկայացնելու օրվա դրությամբ 1%-ից ցածր ժամկետանց հարկային պարտավորությունների և դրանք հետագայում ամբողջությամբ կատարված լինելու մասին ապացույց:

Կից ներկայացնում ենք՝

1. Ներկայացված հայտի գնային առաջարկ Հավելված 5-ը,
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 09.10.2018թ. թիվ 4663 տեղեկանքը,
3. Վճարման հանձնարարական № 691առ 08.10.2018թ. :

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Ջանյան

Հավելված №5
«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

## ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/43» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

*ՀՀ դրամ*

| Չափա-բաժին-ների համար-ները | Ապրանքի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ[2] /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | թուղթ՝ A4 ֆորմատի | **150 000,00** /մեկ հարյուր հիսուն հազար/ | **30 000,00** /երեսուն հազար/ | **180 000,00** /մեկ հարյուր ութսուն հազար/ |
| 2 | նամակի ծրար՝ A4 ձևաչափի | **6 250,00** /վեց հազար երկու հարյուր հիսուն/ | **1 250,00** /մեկ հազար երկու հարյուր հիսուն/ | **7 500,00** /յոթ հազար հինգ հարյուր/ |
| 4 | թուղթ նշումների՝ տրցակներով | **16 666,67** /տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/ | **3 333,33** /երեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա/ | **20 000,00** /քսան հազար/ |
| 5 | նոթատետրեր | **11 250,00** /տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն/ | **2 250,00** /երկու հազար երկու հարյուր հիսուն/ | **13 500,00** /տասներեք հազար հինգ հարյուր/ |
| 6 | հաշվառման գիրքեր | **105 000,00** /մեկ հարյուր հինգ հազար/ | **21 000,00** /քսանմեկ հազար/ | **126 000,00** /մեկ հարյուր քսանվեց հազար/ |
| 8 | թղթապանակ՝ կոշտ կազմով | **50 000,00** / հիսուն հազար/ | **10 000,00** / տաս հազար/ | **60 000,00** /վաթսուն հազար/ |
| 9 | թղթապանակ՝ պոլիմերային թաղանթ, ֆայլ | **62 500,00** /վաթսուներկու հազար հինգ հարյուր/ | **12 500,00** /տասներկու հազար հինգ հարյուր/ | **75 000,00** /յոթանասունհինգ հազար/ |
| 10 | օրագրեր | **45 833,33** /քառասունհինգ հազար ութ հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա/ | **9 166,67** /ինը հազար հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/ | **55 000,00** /հիսունհինգ հազար/ |
| 13 | գրիչ՝ գնդիկավոր | **8 333,33** /ութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա/ | **1 666,67** /մեկ հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/ | **10 000,00** / տաս հազար/ |
| 14 | գրիչ՝ գելային | **3 333,33** /երեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա/ | **666,67** / վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/ | **4 000,00** /չորս հազար/ |

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ տնօրեն Արսեն Ջանյան
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

[2] եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

401002

# Վճարման հանձնարարական № 691

8 հոկտեմբերի 2018թ.

**ԴԵԲԵՏ**

| | | | |
|---|---|---|---|
| Վճարող<br>ՀՎՀՀ 02584897 | *Առէա Պապիրուս ՍՊԸ* | Հաշիվ<br>205042220967-1001 | 17000-00 AMD |
| Վճարողի բանկը | *Ինեկոբանկ ՓԲԸ Կորյունի մ/ճ* | Բանկի կոդը՝ | |

**ԿՐԵԴԻՏ**

| | | | |
|---|---|---|---|
| Ստացող<br>ՀՎՀՀ | *ՀՀ ԿԱ ՊԵԿ* | Հաշիվ<br>900005001186 | |
| Ստացողի բանկը | *Կենտրոնական Գանձապետարան* | Բանկի կոդը՝ | |

Գումարը բառերով

*Տասնյոթ հազար ՀՀ դրամ 00 լումա*

Ապրանքը ստանալու, ծառայությունը մատուցելու ամսաթիվը

Վճարման նպատակը, ապրանքի անվանումը, կատարված աշխատանքը, մատուցված ծառայությունը, ապրանքային փաստաթղթերի համարները և գումարները

*Դրոշմանիշային վճար*

Համաձայն ենք ստորագրությունը

Կ.Տ.

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
«INECOBANK» CJSC
08 OCT 2018 123
Ընդունված է բանկով
Բանկի ստորագրությունը
ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 TIN / ՀՎՀՀ
17 Tumanyan str., Yerevan, RA 02518512

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN LIMITED LIABILITY COMPANY
02584897
«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ»
«АРЭА ПАПИРУС»
«AREA PAPIRUS»
1-05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0051 ՀՀ ք.Երևան Կոմիտաս 35, հեռ 011544116

03.10.2018թ N 4663

# ՏԵՂԵԿԱՆՔ

*Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, գերեւտային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ*

Տրվում է առ այն, որ 26.09.2018 թվականի դրությամբ «ԱՌԻՍԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ ՀՎՀՀ 02584897

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունները, գերեւտային գումարները, սահմանված չափից ավել վճարված գումարները և միասնական հաշվում առկա գումարները, [illegible] կազմում են

| Հարկի կամ վճարի անվանումը | Հարկի կամ վճարի չափը | Տույժը | Տուգանքը | Պարտավորության չափը (ընդամենը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Ավելացված արժեքի հարկ | | | | - |
| Ներմուծման ժամանակ ավելացված արժեքի հարկ | | | | - |
| Շահութահարկ | | | | - |
| Եկամտային հարկ | | | | - |
| Ակցիզային հարկ | | | | - |
| Ներմուծման ժամանակ ակցիզային հարկ | | | | - |
| Շրջանառության հարկ | | | | - |
| Արտոնագրային հարկ | | | | - |
| Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար | | | | - |
| Ներմուծման ժամանակ բնապահպանական հարկ | | | | - |
| Ոչ ռեզիդենտի շահութահարկ | | | | - |
| Սոցիալական վճար (ամսական) | | | | - |
| Սոցիալական վճար (տարեկան) | | | | - |
| Պետական տուրք | | | | - |
| Ռոյալթի | | | | - |
| Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար | | | | - |
| [illegible] հարկ | | | | - |
| Հաստատագրված վճար | | | | - |
| [illegible] հարկ | | | | - |
| Եկամտահարկ | | | | - |
| Պարտադիր սոցիալական ապահովության վճար | | | | - |
| Տուգանքներ և վճարի հատուցման գումար | | | | - |
| Դրոշմանիշային վճար | 1,000 | | | 1,000 |
| Ընդամենը | 1,000 | - | - | 1,000 |

| [illegible] | | Սահմանված չափից ավել վճարված գումարներ | Միասնական հաշվում առկա գումար | Սահմանված չափից ավել վճարված դրոշմանիշային վճար |
|---|---|---|---|---|
| Ավելացված արժեքի հարկ | Ակցիզային հարկ | | | |
| 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 3,222,583 | - | - | 4,530,737 | |

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու ՀՀ ԿԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՀ Ո ԳՀԱՊԶԻ-ՊԻՏՈՒԻՎԻ/2018/ՏՈՆ-31 ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի պետ Գ.ԱՐԱԲԱՋՅԱՆ

Տեղեկանքը կազմող [illegible] (ստորագրությունը) Ե.Արշակյան (անունը, ազգանունը)

09.10.2018

Կնիք: ՀՀ ՊԵԿ ... Թիվ 20 բաժին

[illegible]